

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 4-րդ կազմի 2009 թվականի հոկտեմբերի 29-ին ժամը 15:00-ին կայացած նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝

Անդրանիկ Վերանյանը	«Նոյեմբերյանի Համայնքների Միություն» ԻԱՄ
Աշոտ Հովհաննիսյանը	«Դիլենտ սերվիս» կրթական ՀԿ
Գագիկ Բաբախանյանը	«Բաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամ» ՀԿ
Գրիգոր Բաղիրյանը	«Ինտեգրացիոն գործընթացների աջակցության կենտրոն» ՀԿ
Լիլիթ Ասատրյանը	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
Կարեն Մաթևոսյանը	«Ազատություն և իրավունք» ՀԿ
Կարինե Մովսիսյանը	«Գորիսի երիտասարդական միություն» ՀԿ
Կարեն Զադոյանը	«Հայաստանի իրավաբանական հիմնադրամ»
Հովհաննես Հովհաննիսյանը	««Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Մարատ Ատովմյանը	««Պրոգրես» սոցիալական հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Նունե Պեպանյանը	«Լուսաստղ» ՀԿ
Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
Պարզև Բարսեղյանը	«Հասարակական քարոզչություն» ՀԿ
Սյուզաննա Սողոմոնյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցացիա» ՀԿ
Նորայր Դանիելյանը, ՇԽ անդամ Վիկտոր Ենգիբարյանի լիազոր ներկայացուցիչ	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև՝

Արա Հովսեփյանը	Գլխավոր գործադիր տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Եսթեր Հակոբյանը	Համակարգող ղեկավար, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Վիկտորյա Գրիգորյանը	ՇԽ օգնական, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Գայանե Հարությունյանը	ՀՄԿ հայաստանյան գրասենյակի գործերի կառավարիչ

Համաձայն ՇԽ Կանոնակարգի 3.12 կետի (ՇԽ նիստերը նախագահում են ՇԽ անդամները՝ ռոտացիոն սկզբունքի հիման վրա՝ ըստ ՇԽ անդամների անունների այբբենական կարգի)՝ նիստը նախագահում էր ՇԽ անդամ Աշոտ Հովհաննիսյանը:

Նախագահողն առաջարկեց ՇԽ օգնականին տեղեկատվություն ներկայացնել ՇԽ անդամների մասնակցության վերաբերյալ: ՇԽ օգնականը նշեց, որ հեռախոսագրույց է ունեցել բացակա ՇԽ անդամներից մի քանիսի հետ և տեղեկատվություն է ստացել, որ կժամանեն ժամը 16:00-ին: Հարկ է նշել, որ ՇԽ անդամ Ս. Սողոմոնյանի կողմից նախորդ օրը ներկայացվել էր գրավոր առաջարկություն՝ էլեկտրոնային մամակի տեսքով, նիստի ժամը փոխելու վերաբերյալ (15:00-ի փոխարեն անցկացնել ժամը 16:00-ին), որին, ի դեպ, արձագանքներ չէին եղել ՇԽ-ի մյուս անդամների կողմից:

ՇԽ անդամները ի գիտություն ընդունեցին ներկայացված տեղեկատվությունը: Առաջարկություն եղավ սկսել նիստը:

Նախագահողն առաջարկեց հաստատել օրակարգի ներկայացված նախագիծը.

1. Տեղեկատվության ներկայացում ՀՄՀ-Հայաստան ծրագրի ներկա փուլի և ՇԽ չորրորդ կազմի անդամների ակնկալվող մասնակցության վերաբերյալ
ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրեն Արա Հովսեփյան
2. Քննարկում ՇԽ առաջիկա աշխատանքների վերաբերյալ
ա) ՇԽ աշխատանքային պլանի կազմում
բ) ՇԽ կանոնակարգի վերանայում
3. ՇԽ անդամների փոխարինողների ներկայացում և հաստատում
4. Այլ հարցեր

ՇԽ անդամ Կարեն Մաթևոսյանը հարց բարձրացրեց օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ: ՀՄՀ-Հայաստանի ԳԳՏ Արա Հովսեփյանը պատասխանեց, որ հարցը ենթադրում է ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից ներկայացում ծրագրի ներկա կարգավիճակի վերաբերյալ և ՊՈԱԿ-ի պատկերացումները, ակնկալիքները ՇԽ գործունեությունից:

Օրակարգը հաստատվեց 7 կողմ, 1 ձեռնպահ և 0 դեմ ձայներով:

ՇԽ անդամ Պ. Շահինյանն առաջարկեց ընդմիջում անել 10-15 րոպե տևողությամբ, ինչպես նաև հնարավորություն ընձեռել մյուս գործընկերներին, ովքեր ուշանում են, միանալ նիստին:

Առաջարկությանն առարկություններ չեղան:

Ընդմիջումից հետո նիստը շարունակվեց. նիստին միացան ՇԽ անդամներ Գրիգոր Բաղիրյանը, Կարեն Զադոյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Մարատ Ատովմյանը, Պարզև Բարսեղյանը, Սյուզաննա Սողոմոնյանը, ինչպես նաև ՇԽ անդամ Վիկտոր Ենգիբարյանի լիազոր ներկայացուցիչ Նորայր Դանիելյանը:

Նախագահողն առաջարկեց հաստատել ՇԽ անդամ Վիկտոր Ենգիբարյանի լիազոր ներկայացուցիչ Նորայր Դանիելյանի լիազորագիրը՝ ՇԽ նիստին մասնակցելու նպատակով: Առաջարկության վերաբերյալ եղան ելույթներ. ՇԽ անդամ Պ. Շահինյանը, մեջբերելով ՇԽ Կանոնակարգը և նախորդ տարվա ընթացքում ՇԽ փորձառությունը, նշեց, որ նախատեսվում է, որ ՇԽ յուրաքանչյուր անդամ պետք է անձամբ ներկայանա ՇԽ առաջին նիստին, ներկայացնի իր փոխարինողին և ստանա ՇԽ անդամների համաձայնությունը:

ՇԽ անդամ Լ. Ասատրյանը պաշտպանեց Պ. Շահինյանի առաջարկությունը, հասկապես նման պարագաներում նախադեպ չստեղծելու նպատակով, այնուամենայնիվ, առաջարկեց հաստատել լիազորագիրը, որպես բացառություն:

Ա. Հովսեփյանը նույնպես առաջարկեց հաստատել Վ. Ենգիբարյանի կողմից ներկայացված լիազորագիրը՝ հաշվի առնելով, որ Ն. Դանիելյանը հանդիսացել է Վ. Ենգիբարյանի լիազոր ներկայացուցիչ ՇԽ նախորդ կազմի ժամանակ:

ՇԽ անդամներ Գ. Բաղիրյանը և Կ. Ջադոյանը նույնպես հանդես եկան բարձրացված հարցի վերաբերյալ և նշեցին, որ ՇԽ կանոնակարգի համապատասխան դրույթը չի սահմանափակում ՇԽ անդամների կողմից լիազորագրերի ներկայացման ձևաչափը և չի սահմանում, որ ՇԽ անդամը անձամբ պետք է ներկայացնի իր կողմից լիազորվող անձին:

Նախագահողը քվեարկության դրեց Ն. Դանիելյանի լիազորագիրը հաստատելու առաջարկությունը և 9 կողմ, 2 ձեռնպահ, 0 դեմ ձայներով այն հաստատվեց:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Ա. Հովսեփյանը: Նա ներկայացրեց տեղեկատվություն ծրագրի ներկա կարգավիճակի և գրանցված առաջընթացի վերաբերյալ: Մասնավորապես, Ա. Հովսեփյանը խոսեց կասեցված գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի վերաբերյալ, որի իրականացումը, սակայն, հանձն է առել Կառավարությունը: Ա. Հովսեփյանը ներկայացրեց ծրագրի շրջանակներում առաջիկա երկու տարիների ընթացքում նախատեսված աշխատանքները Ռոզման ենթակառուցվածքներ ենթածրագրի, Ջրից դեպի շուկա բաղադրիչի, Ջրային կառույցների ինստիտուցիոնալ հզորացման ծրագրի շրջանակներում:

Ա. Հովսեփյանը նշեց, որ որպես կանոն ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը անցկացնում է ամենամյա աշխատանքային հանդիպում ՇԽ անդամների մասնակցությամբ՝ մանրակրկիտ ներկայացնելու ծրագրային բաղադրիչները և քննարկելու ՇԽ-ի հետ համագործակցության հարցերը:

ՇԽ անդամներն իրենց հուզող հարցերն ուղղեցին ծրագրի տնօրենին:

ՇԽ նիստի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկություն եղավ սահմանել ռեզյամենտ՝ յուրաքանչյուր հարցը 20 րոպե տևողությամբ:

Առաջարկությունը հաստատվեց միաձայն:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ

Նախագահողն առաջարկեց ՇԽ նախորդ կազմի անդամներին հանդես գալ օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ:

ՇԽ անդամ Ա. Վերանյանն արտահայտվեց ՇԽ աշխատանքային պլանի վերաբերյալ. նշեց, որ այն շարունակական գործընթաց է և աշխատանքի ընթացքում կարող է շարունակաբար լրացվել և համալրվել նոր գործողություններով:

Կարինե Մովսիսյանն արտահայտեց այն կարծիքը, որ ՇԽ հանձնախմբերը փակ կառույցներ չեն. ցանկացողները կարող են ներգրավվել այս կամ այն հանձնախմբում կամ ոչ ֆորմալ կարգով մասնակցել աշխատանքներին:

ՇԽ անդամ Կ. Ջաղոյանը հանդես եկավ մտահոգությամբ, որ կցանկանար ներգրավված լինել ՇԽ նախորդ նիստին ստեղծված կանոնակարգային հանձնախմբում, սակայն ինքը, ինչպես նաև իր մի քանի գործընկերները չեն ճանաչում հոկտեմբերի 13-ի նիստի արդյունքները: Իրենք կարծում են, որ ՇԽ հոկտեմբերի 13-ի նիստը գումարվել է ոչ լեգիտիմ, քանի որ ըստ ՇԽ Կանոնակարգի ՇԽ նիստը գումարվում է այն պարագայում, երբ նիստին ներկա են անդամների 2/3-ը: Կ. Ջաղոյանն առաջարկեց հոկտեմբերի 13-ի նիստի արդյունքները ճանաչել անվավեր և գումարել նոր նիստ, կամ եթե ոչ, գոնե չեղյալ համարել կանոնակարգային հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ որոշումը:

Արտահայտված դիրքորոշման վերաբերյալ եղան մի շարք ելույթներ. մասնավորապես ՇԽ անդամ Կարինե Մովսիսյանը, հղում կատարելով կորպորացիայի համաձայնագրի համապատասխան կետին, որտեղ նշվում է պարզ մեծամասնության առկայության դեպքում նիստերի լեգիտիմությունը, նշեց, որ նախորդ նիստը եղել է լեգիտիմ, իսկ ցանկացողները կարող են համարել կանոնակարգային հանձնախումբը, քանի որ այն փակ չէ:

Նախագահողն առաջարկեց հարցի քննարկումը տեղափոխել այլ հարցեր: Առարկություններ չեղան:

ՇԽ աշխատանքային հանձնախմբում ընդգրկվելու համար առաջադրվեցին հետևյալ թեկնածությունները՝ Լ. Ասատրյան, Գ. Բաբախանյան, Ա. Հովհաննիսյան:

ՇԽ աշխատանքային հանձնախմբի անդամների համար առաջադրված թեկնածությունները հաստատվեցին 8 կողմ, 0 դեմ, 7 ձեռնպահ ձայներով:

ՇԽ անդամ Ն. Պեպանյանը հանդես եկավ առաջարկությամբ Կանոնակարգային հարցերի հանձնաժողովի վերակազմավորելու վերաբերյալ: Հաշվի առնելով ՇԽ անդամների կազմում իրավաբանների ներկայացվածությունը՝ Ն. Պեպանյանն առաջարկեց իր երկու գործընկեր ՇԽ անդամներին, ովքեր նույնպես ներգրավված էին կանոնակարգային հարցերի հանձնաժողովում, հայտնել ինքնաբացարկ՝ հնարավորություն ընձեռելով իրավաբաններին ընդգրկվել խմբում:

Առաջարկության վերաբերյալ ՇԽ անդամների մեջ միակարծություն չեղավ:

ՇԽ անդամները քննարկում անցկացրեցին նաև ՇԽ նիստերի անցկացման ժամի վերաբերյալ: Ընդհանուր քննարկման արդյունքում որոշվեց առաջիկայում ՇԽ նիստերը գումարել ժամը 16:30-ին:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ

Նախագահողն առաջարկեց ՇԽ անդամներին ներկայացնել իրենց կողմից լիազորվող ներկայացուցիչներին, ովքեր ՇԽ անդամի բացակայության պարագայում կփոխարինեն ՇԽ անդամին: Ստորև ներկայացվում է ՇԽ անդամների լիազոր անձանց ներկայացված ցանկը.

N	ՇԽ անդամ	ՇԽ անդամի լիազորված անձ/անձինք
1	Ասատրյան Լիլիթ	Մինասյան Հայկուհի
2	Ատովմյան Մարատ	Հարությունյան Նորայր; Եղիազարյան Աննա
3	Բաբախանյան Գագիկ	Բաբախանյան Հրաչիկ
4	Բաղիրյան Գրիգոր	Հակոբյան Անահիտ; Մարության Ժենյա
5	Բարսեղյան Պարզև	Վարդանյան Նազելի; Մարմարյան Աննա
6	Ենգիբարյան Վիկտոր	Դանիելյան Նորայր

7	Զաղոյան Կարեն	Եղիազարյան Մարիաննա, Սարիբեկյան Արտակ
8	Հովհաննիսյան Աշոտ	Հովհաննիսյան Իշխանուհի; Չիլինգարյան Արտակ
9	Հովհաննիսյան Հովհաննես	Հովհաննիսյան Աշոտ; Գրիգորյան Գեղեցիկ
10	Մաթևոսյան Կարեն	Ղարազույան Արթուր; Սահակյան Արամայիս
11	Մովսիսյան Կարինե	Դոլունց Արտաշես, Սիրան Մովսիսյան
12	Շահինյան Պողոս	Ֆրունջյան Մարիաննա; Հովհաննիսյան Լիլիթ
13	Պեպանյան Նունե	Մարգարյան Նոնա; Մադաթյան Հասմիկ
14	Սողոմոնյան Սյուզաննա	Հարությունյան Սոնա, Հայրապետյան Գրիգորի
15	Վերանյան Անդրանիկ	Աբրահամյան Թամարա

Քվեարկության արդյունքում ՇԽ անդամների լիազոր անձանց ներկայացված ցանկը միաձայն հաստատվեց:

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ

Այլ հարցերի շրջանակներում ՇԽ անդամ Գ. Բաղիրյանը արտահայտեց իր և իր վեց գործընկեր ՇԽ անդամների մտահոգությունները ՇԽ անդրանիկ նիստի անցկացման լեգիտիմության վերաբերյալ: Նա նշեց, որ ՇԽ կանոնակարգով նիստին պետք է ներկա լինեին անդամների 2/3-ը, որը չի եղել:

Գիտողության վերաբերյալ եղան մի շարք ելույթներ և կարծիքներ: Արտահայտված հիմնական մտտեցումները ներկայացվում են ստորև.

ՇԽ անդամ Պ. Շահինյանը նախորդ ՇԽ նիստին բացակա գործընկերներին հիշեցրեց, որ ՇԽ անդամների մի շարք փորձերը գումարել նիստ ձախողվել էին, մասնավորապես ՇԽ առաջին նիստը նախատեսվել էր դեռևս հոկտեմբերի 3-ին, որը չկայացավ նույն յոթ ՇԽ անդամների «բոյկոտելու» արդյունքում: Պ. Շահինյանը մեկնաբանեց, որ ՇԽ Կանոնակարգի ցանկացած հակասության դեպքում նախապատվությունը տրվում է միջապետական պայմանագրին, որում մասնավորապես ասվում է, որ ՇԽ նիստերը կարող են գումարվել ՇԽ անդամների պարզ մեծամասնության դեպքում:

ՇԽ անդամ Կ. Մովսիսյանը կոչ արեց իր գործընկերներին ցուցաբերել առավել պատասխանատու մոտեցում, ժամանակին մասնակցել ՇԽ նիստերին և չխափանել ՇԽ աշխատանքների արդյունավետությունը:

ՇԽ անդամ Լ. Ասատրյանը նշեց, որ առաջին նիստին իրենց կողմից փորձ է արվել ապահովել բացակաների մասնակցությունը, սակայն բացակաների կողմից ներկայացվել են մի շարք նախապայմաններ, որոնք իրենց կողմից ընդունելի չեն:

Արձագանքելով արտահայտված կարծիքներին՝ Գ. Բաղիրյանը նշեց, որ միջազգային, միջպետական համաձայնագիրը գերակայում է այն պարագայում, երբ կան հակասություններ, իսկ ինքը հակասություն չէր տեսնում: Նրանք ցանկացել են լուծում ստանալ ՇԽ անդամության թեկնածու Գ. Բալայանի և Ա. Ալեքսանյանի կողմից բարձրացված հարցերի, նոր միայն գումարել ՇԽ նիստ:

Կ. Չադդյանն էլ նշեց, որ ՇԽ աշխատանքները պետք է սկսել այն ժամանակ, երբ լուծված կլինեն ՇԽ անդամների ընտրությունների հետ կապված բոլոր հիմնահարցերին, այդ թվում լուծում կտրվեն Գ. Բալայանի և Ա. Ալեքսանյանի կողմից ներկայացված մտահոգություններին:

Վերոնշյալի վերաբերյալ արտահայտվեց նաև ՇԽ անդամ Ա. Վերանյանը: Նա նշեց, որ ՇԽ ընտրական հանձնաժողովը պատշաճ ձևով արձագանքել է բոլոր մտահոգություններին, անցկացրել է քվեաթերթիկների վերանայում, նորից քվեարկում անցկացրել դրանց վերաբերյալ: Ա. Վերանյանը կարծիք հայտնեց, որ ՇԽ ընտրությունները կայանում են ամբողջապես, կամ ընդհանրապես չեն կայանում, և չի կարելի դրանք համարել մասնակի կայացած: Նա նաև խնդրեց գործընկերներին վերջ դնել այս քննարկումներին, որոնք չեն նպաստում ո՛չ ՇԽ աշխատանքին, ո՛չ ծրագրին և ո՛չ էլ քաղաքացիական հասարակությանը:

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Արա Հովսեփյանը նույնպես հանդես եկավ ելույթով: Նա նշեց, որ այս տարի ՇԽ ընտրական ողջ գործընթացը իրականացվել է ՇԽ-ի կողմից և ՊՈԱԿ-ը, բացի տեխնիկական աջակցությունից, չի մասնակցել որևէ այլ գործընթացի: Մյուս կողմից, ՊՈԱԿ-ը պատասխանատուն և պաշտպանն է Համաձայնագրի և դրանից բխող ածանցյալ երեք պայամանագրերի, իսկ ՇԽ կանոնակարգից բխող պարտավորությունների կատարմանը պետք է հետևի ՇԽ-ը: Ա. Հովսեփյանը կոչ արեց ՇԽ անդամներին գալ կոնսետուսի: Իր հերթին ՊՈԱԿ-ը պատրաստ է շարունակել ցուցաբերել անվերապահ աջակցություն ՇԽ-ին, տրամադրել անհրաժեշտ տեխնիկական և մարդկային ռեսուրսներ աշխատանքը արդյունավետ կազմակերպելու նպատակով: Մյուս կողմից, ՇԽ-ի կողմից համապատասխան որոշման դեպքում, ՊՈԱԿ-ը լիազորված մարմնին կփոխանցի ՇԽ ընտրության հետ կապված բոլոր վիճարկելի փաստաթղթերը:

Հարցի քննարկումը շարունակվեց մինչ նիստի համար սահմանված ժամի ավարտը, և նախագահողը հայտարարեց նիստի փակման վերաբերյալ:

Նախագահող՝

Ա. Հովհաննիսյան

Քարտուղար՝

Վ. Գրիգորյան

29-ը հոկտեմբերի, 2009թ.